



**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն**

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102, E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

09.01.2018թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ  
Պարոն **Աշոտ Միմոնյանին**

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի  
«Հետք» թերթի լրագրող  
**Գրիշա Բալասանյանից**  
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն *Միմոնյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում մարզի խմելու ջրի մատակարարման, որակի վերաբերյալ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Մարզում քանի՞ համայնք է ջուր ստանում կենտրոնական ջրամատակարարման համակարգից և որ համայնքներն են դրանք: Տեղեկատվությունը տրամադրել ըստ 2016-2017թթ.՝ առանձին-առանձին:
2. Ոչ կենտրոնական համակարգից համայնքներն ի՞նչ եղանակով են ստանում ջուր: Ինչպե՞ս է իրականացվում մատակարարումը, ինչ գրաֆիկով:
3. Ո՞ր համայնքներում չի իրականացվում ջրի վնասագերծում և ի՞նչ պատճառով:
4. 2016-2017թթ. ընթացքում մանրէաբանական ցուցանիշներով ջրի քանի՞ նմուշ է հետազոտվել, ո՞ր համայնքների խմելու ջուրն է ստուգվել և որ համայնքներում են շեղումներ գրանցվել: Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, համայնքների:
5. 2016-2017թթ. ընթացքում մանրէաբանական ցուցանիշներով որ համայնքներում ինչպիսի շեղումներ են արձանագրվել: Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, համայնքների և արձանագրված շեղումների ու դրանց տեսակների:
6. 2016-2017թթ. ընթացքում խմելու ջրի պատճառով հիվանդության քանի՞ դեպք է գրանցվել, որ համայնքներում և ինչ պատճառով: Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, համայնքների, հիվանդների թվի և հիվանդության տեսակի:
7. 2016-2017թթ. տվյալներով մարզում քանի՞ համայնք խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման կարիք ունի, որ համայնքներն են դրանք: Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, համայնքների:

*Կանխավ շնորհակալություն*

Դիմող՝ **Գրիշա Բալասանյան**



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51  
0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51  
0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

№ \_\_\_\_\_  
Ի պատասխան Ձեր 09-01-2018թ. գրության

**<<Հետաքննող լրագրողներ>> Հ/Կ-ի  
<< Հետք>> թերթի լրագրող  
պարոն Գ. Բալասանյանին**

ՀՀ Արագածոտնի մարզի 42 համայնքների՝ այդ թվում երեք քաղաքների ջրամատակարարումը 2016թ-ին իրականացվել է <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի կողմից, 3 համայնքներում ջրամատակարարումը իրականացրել է <<Երևան ջուրը>>, իսկ մնացած 72 համայնքներինը իրականացվել է համայնքների լոկալ ջրաղբյուրներից:

2017թ-ին մարզի 35 համայնքների (այդ թվում 22 մանրածախ, 13 մեծածախ) ջրամատակարարումը իրականացվել է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի, իսկ մնացած 79 համայնքներինը իրականացվել է համայնքների լոկալ ջրաղբյուրներից:

2016-2017 թթ ժամանակշրջանում մարզում չեն առձանագրվել սուր աղիքային հիվանդությունների բռնկման դեպքեր: ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ բնակչությանը տրվող խմելու ջրի որակի նկատմամբ իրականացվում է շարունակական վերահսկողություն (մոնիտորինգ), որի արդյունքները պարբերաբար քննարկվում են մարզպետարանում ջրամատակարարում իրականացնող օպերատորների և համայնքների ղեկավարների հետ՝ թերությունների վերացման ուղղությամբ տրվում են գրավոր առաջարկություններ: Մոնիտորինգի և քննարկումների արդյունքները ցույց են տվել, որ այդ ուղղությամբ կա դրական տեղաշարժ: Մոնիտորինգի մանրամասն արդյունքները Ձեզ կարող է տրամադրել ՀՀ առողջապահության նախարարությունը:

Ձեզ հետաքրքրող մնացած տեղեկատվությունը տրամադրվում է կից ներկայացված աղյուսակով:

**Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

Կադրային Ա. Դավ.....  
Հեռ.՝ 0232-3-37-74